Ովքեր են Գեղարվեստի պետական ակադեմիայի և Վ. Բրյուսովի համալսարանի ռեկտորները - «Mamul.am», 11.01.2018

Կառավարությունն այսօրվա նիստում հաստատել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի և Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ռեկտորի պաշտոնների ընտրության արդյունքները: Ըստ դրա՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտորի պաշտոնում հաստատվել է Արամ Իսաբեկյանը, իսկ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ռեկտորի պաշտոնում՝ Կարինե Հարությունյանը:

https://mamul.am/am/news/118017